

# ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐ



**Երվանդունիները հայկական թագավորական և սատրապական տոհմ են. թագավորել են մ. թ. ա. VI–II դարերում: Ստեղծել են առաջին համահայկական պետությունը: Տոհմը կոչվում է հիմնադիր արքա Երվանդ Մակավակյացի անունով:**

## Երվանդունիների արքայացանկը

1. Երվանդ Ա Մակավակյաց (մ. թ. ա. մոտ 570–560-ական թթ.),
2. Տիգրան Երվանդյան (մ. թ. ա. մոտ 560–535 թթ.),
3. Հյուդարնես Ա (մ. թ. ա. VI դարի վերջ),
4. Հյուդարնես Բ (մ. թ. ա. V դարի սկիզբ),
5. Հյուդարնես Գ (մ. թ. ա. V դարի կես),
6. Արտաշիր (մ. թ. ա. V դարի 2-րդ կես),
7. Երվանդ Բ (մ. թ. ա. 404–360 ական թթ.՝ ընդհատումներով),
8. Երվանդ Գ (մ. թ. ա. 331 – մոտ 300 թթ.), այնուհետև հաջորդել է անվան – անեսս վերջավորությամբ մի գահակալ, ապա տոհմը տրոհվել է,
9. Երվանդ Դ Վերջին (մ. թ. ա. III դարի վերջ – մոտ 200 թ.)

# ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐ



**Արտաշիսյան արքայատոհմը գահակալել է մ. թ. ա. 189 – մ. թ. 1 թթ-ին: Նրանց օրոք Մեծ Հայքի թագավորությունը հասել է իր հզորության գագաթնակետին:  
Արքայատոհմը կոչվել է հարստության հիմնադիր արքա Արտաշես Ա-ի (մ. թ. ա. 189թ. –մոտ 160թ.) անունով:**

## Արտաշիսյանների արքայացանկը

1. Արտաշես Ա (մ. թ. ա. 189 թ. – մոտ 160 թ.),
2. Արտավազդ Ա (մ. թ. ա. մոտ 160 թ.– մոտ 115 թ.),
3. Տիրան (Տիգրան Ա, մ. թ. ա. մոտ 115 թ. – 95 թ.),
4. Տիգրան Բ Մեծ (մ. թ. ա. 95 – 55 թթ.),
5. Արտավազդ Բ (մ. թ. ա. 55 – 34 թթ.),
6. Արտաշես Բ (մ. թ. ա. 30 – 20 թթ.),
7. Տիգրան Գ (մ. թ. ա. 20 թ. – մոտ 8 թ.),
8. Տիգրան Դ (մ. թ. ա. մոտ 8 – 5 թթ. և մ. թ. ա. 2 – 1 թթ.),
9. Արտավազդ Գ (մ. թ.ա. 5 – 2 թթ.),
10. Տիգրան Դ և Էրատո (մ. թ. ա. 2 – մ. թ. 1 թթ.)

**ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ**



**Հայ Արշակունիների արքայատոհմը սերել է պարթև Արշակունիների արքայատնից, թագավորել է Մեծ Հայքում 66–428 թթ-ին:**

## **Հայ Արշակունիների արքայացանկը**

1. Տրդատ Ա (52 թ-ից, պաշտոնապես՝ 66–88 թթ.),
2. Սանատրուկ (88–110 թթ.),
3. Աշխադար (110–113 թթ.),
4. Պարթամասիր (113–114 թթ.),
5. Վաղարշ Ա (117–144 թթ.),
5. Բակուր (161–163 թթ.),
6. Վաղարշ Բ (186–198 թթ.),
7. Խոսրով Ա Մեծ (198–216 թթ.),
8. Տրդատ Բ (217–252 թթ.), Խոսրով Բ (279–287 թթ.), Տրդատ Գ Մեծ (287–330 թթ.), Խոսրով Գ Կոտակ (330–338 թթ.),
9. Տիրան (330–350 թթ.),
10. Արշակ Բ (350–368 թթ.),
11. Պապ (370–374 թթ.),
12. Վարազդատ (374–378 թթ.),
- 13 Արշակ Գ (378–389 թթ.),
14. Խոսրով Դ (384–388 թթ., 414 թ.– մոտ 415 թ.),

15. Վռամշապուհ (385-415 թթ.), Արտաշես Գ (423–428 թթ.)

Արշակունիների թագավորության օրոք տեղի են ունեցել 2 կարևորագույն իրադարձություններ՝ Հայաստանում քրիստոնեությունն ընդունվել է որպես պետական կրոն (301 թ.) և Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է (405 թ.) հայոց այբուբենը:

## ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ



Հայ Բագրատունիները նախարարական, ապա արքայական տոհմ էին Հայաստանում (IX–XI դարերում): 922 թ-ից կրել են Շահնշահ Հայոց և Վրաց տիտղոսը: Վրաստանում սկզբնավորել են վրաց Բագրատունիների արքայատոհմը (IX–XIX դարեր):

## Հայ Բագրատունիների արքայացանկը

1. Աշոտ Ա Մեծ (885–890 թթ.)
2. Սմբատ Ա (890–914 թթ.)
3. Աշոտ Բ Երկայթ (914–929 թթ.)
4. Աբաս (929–953 թթ.)
5. Աշոտ Գ Ողորմած (953–977 թթ.)
6. Սմբատ Բ (977–989 թթ.)
7. Գագիկ Ա (989–1020 թթ.)
8. Հովհաննես-Սմբատ (1020–41 թթ.), միաժամանակ՝ Աշոտ Ղ (1022–40 թթ.), Գագիկ Բ (1042–45 թթ.)